Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 27-02-2020 թ. որոշմամբ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԹԱՂԱՄԱՍ ԿԱՐԱՊԵՏ ՈՒԼՆԵՅՈՒ 31
1.3 Պետական գրանցման համարը		222.160.02351
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2000-09-13
1.5 ՀՎՀՀ-ն		00846441
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10247123
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.atdf.am
1.8 Էլեկտրոնային փոստը		atdf@atdf.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
ՀՀ Կառավարություն		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	70	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր	2524273415
	Սեյսմիկ անվտանգության բարձրացման ծրագիր	570601898
	Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր	2110378147
	Տեղական ինքնակառավարման բարեփոխումների աջակցման ծրագիր / ԱՄՆ ՄԶԳի	425283643
	ՀՀ մարզերում առաջնահերթ լուծում պահանջող ծրագրեր	367467454

Digitally signed by
DULYAN LEVON
2007510154
Date: 2020.07.06
02:20:27 PDT

	ՀՀ մարզերում ջրամատակարարման համակարգերի վերակառուցման նախագծահետազոտական փաստաթղթերի (թվով 50 նախագիծ) ձեռքբերման ծրագիր	296572600
	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լեհվազ գյուղի գազիֆիկացման, Մեղրի և Ագարակ քաղաքների չգազիֆիկացված տարածքների գազիֆիկացման ծրագիր	289150400
	Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից կառուցված դպրոցների գույքով ապահովում	48439050
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր	2469827513	
Սեյսմիկ անվտանգության բարձրացման ծրագիր	3365706819	
Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր	1748841020	
Տեղական ինքնակառավարման բարեփոխումների աջակցման ծրագիր / ԱՄՆ ՄԶԳի	432975492	
Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալությանդ բամաշնորհային ծրագիր	29352948	
Ջերմուկի համայնքի առաջնահերթ հիմնախնդրիների լուծման ծրագիր	40497923	
Ջերմուկի համայնքում տարածքային զարգացման աճի բեռեռի ձևավորման ծրագիր	229478680	
ՀՀ մարզերում առաջնահերթ լուծում պահանջող ծրագրեր	2567356728	

12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	10884037123
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	10884037123

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 33 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 3
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 6
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....7
ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 8
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....9
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....10

Հիմնադրամի գտնվելու վայրը՝	ՀՀ, ք. Երևան 0037, Ուլնեցու 31
Իրավական ձևը՝	Հիմնադրամ
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Կազմակերպության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում
Գործադիր տնօրեն՝	Արթուր Սողոմոնյան

Հեռ.՝+37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ("ՀՏԶՀ" կամ "Հիմնադրամ") ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, կապիտալում փոփոխությունների, և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում ՀՏԶՀ-ի ֆինանսական վիճակը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) ներքո գործող Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ԱՈՄՄԽ) կողմից հրապարակված Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:
Մենք անկախ ենք ՀՏԶՀ-ից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք)* և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների:
Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում – Հետագա դեպքեր

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություն 14-ի վրա, որը նկարագրում է հաշվետու ամսաթվից հետո COVID-19 համավարակի հնարավոր ազդեցությունը:

Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

ՀՏՋՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:
Կառավարման լիազոր անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրաշահում,

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ
1 հուլիսի, 2020թ.

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար

«ԲԴՕ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО «БДО АРМЕНИЯ»
CLOSED JOINT STOCK COMPANY «BDO ARMENIA»
ԵՐԵՎԱՆ ЕРЕВАН YEREVAN
01569792

BDO

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2019թ□ դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31.12.2019 ԱՄՆ դոլար	31.12.2018 ԱՄՆ դոլար
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	3	75,761	126,972
Ստացվելիք ֆոնդեր	4	150,910,172	163,679,456
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**150,985,933**	**163,806,428**
Ընթացիկ ակտիվներ			
Կանխավճարներ	5	2,381,406	3,024,241
Դրամական միջոցներ	6	20,195,173	29,049,161
Այլ դեբիտորական պարտքեր		-	812,122
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**22,576,579**	**32,885,524**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**173,562,512**	**196,691,952**
ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կապիտալ			
Հիմնադիրների ներդրումներ	7	151,631	151,631
Կուտակված հավելուրդ /(դեֆիցիտ)		6,795	(155,989)
Ընդամենը կապիտալ		**158,426**	**(4,358)**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Շնորհներ կառավարությունից	8	172,129,898	195,168,498
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**172,129,898**	**195,168,498**
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	9	1,274,188	715,701
Այլ կրեդիտորական պարտք		-	812,111
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**1,274,188**	**1,527,812**
ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**173,562,512**	**196,691,952**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ղեկավարության կողմից 2020թ. հուլիսի 1-ին: Կից ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Արթուր Սողոմոնյան
Գործադիր տնօրեն

Լևոն Դուլյան
Ֆինանսավարչական տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծնթ.	**2019** ԱՄՆ դոլար	**2018** ԱՄՆ դոլար
Ծրագրային ծախսեր	10	(24,090,010)	(19,231,713)
Եկամուտ շնորհներից	8	24,090,010	19,231,713
Այլ եկամուտ/(ծախս), զուտ		97,385	93,551
Օգուտ/(կորուստ) փոխարժեքային տարբերությունից, զուտ		81,430	(38,706)
Տարվա արդյունք մինչև հարկումը		**178,815**	**54,845**
Շահութահարկ		(16,031)	(26,298)
Տարվա արդյունք		**162,784**	**28,547**
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Տարվա համապարփակ արդյունք		**162,784**	**28,547**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Հիմնադիրների ներդրումներ ԱՄՆ դոլար	Կուտակված հավելորդ /(դեֆիցիտ) ԱՄՆ դոլար	Ընդամենը ԱՄՆ դոլար
Առ 1 հունվարի 2018թ.	**151,631**	**(184,536)**	**(32,905)**
Տարվա արդյունք	-	28,547	28,547
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	**151,631**	**(155,989)**	**(4,358)**
Տարվա արդյունք	-	162,784	162,784
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	**151,631**	**6,795**	**158,426**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	2019	**2018**
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված ֆոնդեր		
Հրատապ ծրագրեր	760,965	7,656,104
ՄՆՏԶ	5,247,760	6,770,401
ՏՏԵԶ	4,405,012	2,311,786
SDC շնորհ	-	2,153,638
USAID շնորհ	890,830	1,624,103
ՍԱԲԾ	1,184,307	689,969
Ջերմուկ-2	-	1,441,622
Ջերմուկ-1	-	(115,829)
Դպրոցական կահույք ՍԱԲԾ ծրագրի համար	122,509	-
ՀՀ մարզերում ջրամատակարման ծրագիր	611,598	-
Գազաֆիկացման ծրագիր	603,025	-
Այլ	37,004	127,482
	13,863,010	**22,659,276**
Ծրագրային ծախսեր		
Հրատապ ծրագրեր	(5,366,630)	(81,599)
ՄՆՏԶ	(5,157,410)	(7,175,121)
ՏՏԵԶ	(3,658,452)	(1,987,610)
SDC շնորհ	(64,917)	(2,310,280)
USAID շնորհ	(903,918)	(1,565,636)
ՍԱԲԾ	(7,016,732)	(4,139,254)
Ջերմուկ-2	(479,295)	(97,081)
Ջերմուկ-1	(83,183)	(1,229,909)
Դպրոցական կահույք ՍԱԲԾ ծրագրի համար	-	-
ՀՀ մարզերում ջրամատակարման ծրագիր	-	-
Գազաֆիկացման ծրագիր	-	-
Այլ	(51,353)	(40,848)
	(22,781,890)	**(18,627,338)**
Այլ գործառնական դրամական միջոցների հոսքեր, զուտ	(59,136)	-
Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	**(8,978,016)**	**4,031,938**
Փոխարժեքային տարբերություններ	124,028	32,755
Դրամական միջոցների զուտ հոսք	**(8,853,988)**	**4,064,693**
Դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին	**29,049,161**	**24,984,468**
Դրամական միջոցների մնացորդը տարեվերջին	**20,195,173**	**29,049,161**

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Հիմնադրամը և գործունեությունը

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամը (ՀՏԶՀ) Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամի (ՀՍՆՀ) իրավահաջորդն է 2015թ.-ից սկսած: ՀՏԶՀ-ն 04.08.2015թ.-ից գործունեությունը շարունակում է նոր կանոնադրության հիման վրա՝ շարունակելով ՀՍՆՀ-ի բնականոն գործունեությունը:

ՀՍՆՀ-ն ստեղծվել է 11.04.2000թ. միակ հիմնադիր ՀՀ Կառավարության № 162 որոշման համաձայն՝ որպես անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ համայնքներում փոքրածավալ ենթակառուցվածքների վերականգնմանը և կենսամակարդակի բարելավմանը աջակցելու նպատակով: ՀՍՆՀ-ն գրանցվել է 2000թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ Արդարադատության նախարարության № 988 հրամանի համաձայն:

ՀՏԶՀ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0037, Ուլնեցու 31:

ՀՏԶՀ-ն իրականացնում է ծրագրեր ուղղված.

- բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացմանը՝ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների, աշխատանքի, ներդրումային գործունեության որակի և հասանելիության բարելավման միջոցով,
- ՀՀ-ի տարածաշրջանների ինստիտուցիոնալ և ֆինանսական հզորացմանը:

Ծրագրերը ֆինանսավորվում են ՀՀ Կառավարության կողմից՝ հիմնականում միջազգային դոնորներից ստացված ֆոնդերի միջոցներով: Զարգացման Միջազգային Ընկերակցությունը (ԶՄԸ, IDA), Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկը (ՎԶՄԲ, IBRD) և Ասիական Զարգացման Բանկը (ԱԶԲ, ADB) հանդիսանում են ամենախոշոր դոնորները:

Ծրագրերը համաֆինանսավորվում են՝
- ՀՀ Կառավարության,
- տեղական համայնքների և
- այլ հովանավորների կողմից:

1.2 Իրականացվող ծրագրեր

Հիմնադրման օրվանից ՀՏԶՀ/ՀՍՆՀ-ն իրականացրել է մի շարք հիմնական ծրագրեր՝ ՀՍՆՀ I, ՀՍՆՀ II, ՀՍՆՀ III, ՄՆՏԶ, ՍԱԲԾ և ՏՏԵԶ որոնց նպատակն է՝ բարձրացնել աղքատ և խոցելի խմբերի կենսամակարդակը հետևյալ միջոցներով.
ա/ աղքատ համայնքներում համայնքային ենթակառուցվածքների ու ծառայությունների ծածկույթի մեծացում, որակի և հասանելիության բարելավում,
բ/ համայնքային և քաղաքային մակարդակներով ինստիտուցիոնալ օժանդակ կարողությունների խթանում, որպեսզի բարելավվեն ծառայությունների մատուցման որակը և շարունակականությունը, համայնքային ներդրումները, հաշվետվողականությունը, և բարձրացվի շահառուների մասնակցությունը տեղական մակարդակով:

31.12.2019թ.-ին ավարտվող տարում, ՀՏԶՀ-ն իրականացրել է հետևյալ Ծրագրերը.

- "ՍՆՏԶ" - "Սոցիալական Ներդրումների և Տարածքային Զարգացման" Ծրագիրը, որը ֆինանսավորվում է ՀՀ-ի և ՎԶՄԲ միջև 08.04.2015թ.-ին կնքված IBRD Loan Number 8483-AM համաձայնագրով՝ 30,000,000 USD գումարի չափով: Ծրագրի նպատակն է համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքների որակի և հասանելիության բարելավումը:
  Վարկի ֆինանսավորման ավարտը սահմանված է 31.12.2021թ.-ը:

- "ՍԱԲԾ" - "Սեյսմիկ անվտանգության բարելավման Ծրագիր", որը ֆինանսավորվում է ԱԶԲ-ի և ՀՀ-ի միջև 19.10.2015թ. կնքված ADB Loan 3284-ARM վարկային համաձայնագրով՝ 83,600,000 USD գումարի չափով: Ծրագրի նպատակն է կառուցել երկրաշարժադիմացկուն դպրոցներ և բարելավել բնական աղետներին արձագանքումը:
  ՍԱԲԾ ծրագրի ավարտը սահմանված է 31.05.2024թ.-ը:

- "USAID շնորհ" – "Տեղական կառավարման բարեփոխումների" Ծրագիր, որը ֆինանսավորվում է ԱՄՆ-ի Միջազգային Զարգացման Գործակալության (USAID) և ՀՏԶՀ-ի միջև 10.08.2015թ. կնքված Իրականացման նամակի՝ 8,600,000 USD գումարի չափով. Ծրագրի նպատակն է ֆինանսավորել 14 փորձնական խոշորացվող համայքներում միջհամայնքային ծրագրերը:
  Ծրագրի ավարտը սահմանված է 10.08.2020թ.-ը:

- "ՏՏԵԶ" - "Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման" Ծրագիր, որը ֆինանսավորվում է ՎԶՄԲ-ի և ՀՀ-ի միջև 23.02.2016թ. կնքված IBRD Loan Number 8572-AM վարկային համաձայնագրով՝ 55,000,000 USD գումարի չափով: Ծրագրի նպատակն է Հայաստանի ընտրված մարզերում (Կոտայք, Վայոց Ձոր, Սյունիք, Լոռի, Արմավիր, Արարատ) տեղական տնտեսության մեջ զբոսաշրջության ավելի մեծ մասնակցության համար ենթակառուցվածքային ծառայությունների և ինստիտուցիոնալ կարողությունների բարելավումը: Մասնավորապես, Ծրագիրը աջակցում է բիզնես և ներդրումային միջավայրին՝ Փոքր և Միջին Ձեռնարկություններ (ՓՄՁ) ստեղծման, աճի, նորարարությունների համար:

  Ծրագիրն ուժի մեջ է մտել 29.12.2016թ.-ին: Ծրագրի հետ կապված աշխատանքները սկսվել են 21.04.2017թ.-ից: ՎԶՄԲ Loan Number 8572-AM վարկի ֆինանսավորման ավարտը սահմանված է 31.03.2023թ.-ը:

- "SDC շնորհ" - 23.09.2016թ.-ին կնքված "Սոցիալական Ներդրումների և Տարածքային Զարգացման" դրամաշնորհային ծրագիրը, որը ֆինանսավորվում է Շվեցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալության (SDC) կողմից և ստորագրված 13.10.2016թ.-ին ՀՀ-ի և ՎԶՄԲ-ի միջև՝ 2,428,300 USD գումարի չափով: Ծրագրի նպատակն է՝ բարելավել Հայաստանի հարավային մասում համայնքների կարողությունները՝ ապահովելու կայուն հանրային ենթակառուցվածների և ծառայությունների հասանելիությունը իրենց քաղաքացիներին:
  Ծրագիրն ուժի մեջ է մտել 02.02.2017թ.-ին: Ծրագրի աշխատանքները սկսվել են 15.03.2017թ.-ից: Ծրագրի ավարտման ժամկետ է սահմանված 31.04.2019թ.-ը:

- ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ համայնքում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ծրագիր, որը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից 1,190,693.5 հազար դրամ գումարի չափով:

- ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ համայնքում տարածքային զարգացման աճի բևեռի ձևավորում Ծրագիր, որը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից 679,940 հազար դրամ գումարի չափով:

- ՀՀ մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ծրագիր, որը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից 3,657,994.3 հազար դրամ գումարի չափով:

- ՀՀ մարզերում ջրամատակարարման համակարգերի վերակառուցման նախագծահետազոտական փաստաթղթերի (թվով 50 նախագիծ) ձեռքբերման ծրագիր, որը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից 296,572.6 հազար դրամ գումարի չափով:

- ՀՀ Սյունիքի մարզի Լեհվազ գյուղի գազիֆիկացման, Մեղրի և Ագարակ քաղաքների չգազիֆիկացված տարածքների գազիֆիկացման, որը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից 289,150.4 հազար դրամ գումարի չափով:

- Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում՝ կառուցված դպրոցների գույքով ապահովում, որը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից 58,489.5 հազար դրամ գումարի չափով:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1 Պատրաստման հիմունքները

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Ֆեդերացիայի կողմից ընդունված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ-ներ) պահանջների համաձայն:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն՝ ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

ա) 2019թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

- ՖՀՄՍ 16 “Վարձակալություն”;
- ՖՀՄՄԿ 23 “Շահութահարկի հաշվառման մոտեցման անորոշություն”:

Նշվածներից ոչ մեկը չունի նշանակալի ազդեցություն Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

բ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՍ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Առկա չեն նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել, որոնք կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Ընկերության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

2.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

ՀՏԶՀ-ի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը: Այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):

2.4. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Հիմնադրամը գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից:
Հաշվետու տարում առկա չեն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, որոնք կարող են հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և

պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրումների պատճառ հանդիսանալ:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում:
Հիմնադրամի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)*
- *Մակարդակ 2: Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից*
- *Մակարդակ 3: Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

2.5. Ֆինանսական գործիքներ - Ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Հիմնադրամը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ:

Հիմնադրամը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:
Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Հիմնադրամի նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել (եթե այլ բան սահմանված չէ):

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Կրեդիտորական պարտքեր

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների

	Ամորտիզացված արժեքով չափվող	
Ֆինանսական ակտիվներ	**31.12.2019թ.**	**31.12.2018թ.**
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Ստացվելիք ֆոնդեր	159,910,172	163,679,456
Դրամական միջոցներ	20,195,173	29,049,161
	171,105,345	**192,728,617**

	Ամորտիզացված արժեքով չափվող	
Ֆինանսական պարտավորություններ	**2019թ.**	**2018թ.**
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Կրեդիտորական պարտքեր	1,274,189	715,703
	1,274,189	**715,703**

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, կրեդիտորական պարտքեր:
Դրամական միջոցների և դրանց համարժեքների, կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:
Հավելված Ա-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Հիմնադրամի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացվում է հոգաբարձուների խորհրդի կողմից:
Հոգաբարձուների խորհրդի նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ հնարավորինս բացառելու Հիմնադրամի արդյունավետ գործունեությանը խանգարող հանգամանքների առաջացումը: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Հիմնադրամը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է բանկերում պահվող դրամական միջոցներից:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Հիմնադրամի ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է

Հիմնադրամի՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:
Համաձայն Հիմնադրամի քաղաքականության՝ Հիմնադրամը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ, որպեսզի կարողանա մարել սահմանված պարտավորությունները:
Ստորև ներկայացված են Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

	Մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավել
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Կրեդիտորական պարտքեր	13,331	76,015	249,073	935,770	-
	13,331	**76,015**	**249,073**	**935,770**	**-**
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Կրեդիտորական պարտքեր	4,651	163,516	308,908	238,626	-
	4,651	**163,516**	**308,908**	**238,626**	-

2.6. Գործարքներ արտարժույթով

Արտարժույթը ՀՏԶՀ-ի ֆունկցիոնալ արժույթից տարբերվող արժույթն է:
Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ ֆունկցիոնալ արժույթի միջին փոխարժեքը:

ՀՏԶՀ-ի բանկային հաշիվները վարվում, իսկ գործարքներն իրականացվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով: ՀՀ դրամով արտահայտված գործարքները փոխարկվում են ԱՄՆ դոլարի հետևյալ կերպ.

- ՀՀ դրամով արտահայտված Հայաստանի Հանարապետության հատկացումները ներկայացվում են ԱՄՆ դոլարով յուրաքանչյուր փոխանցման օրվա ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած փոխարժեքով,
- ՀՀ դրամով արտահայտված ծախսերի վճարումները կապալառուներին և այլ մատակարարներին ներկայացվում են ԱՄՆ դոլարով վճարման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի սահմանած փոխարժեքով:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պաշտոնական փոխարժեքն է՝ 1 ԱՄՆ դոլար = 483.76 դրամ:
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պաշտոնական փոխաժեքն է՝ 1 ԱՄՆ դոլար = 479.70 դրամ:

2.7. Դրամաշնորհներ կառավարությունից

Կառավարությունից ստացված դրամաշնորհները, որոնք որոշակի պայմաններով տրվում են ՀՏԶՀ կանոնադրական գործունեության իրականացման նպատակով, ճանաչվում են իրենց իրական արժեքով, երբ կա հիմնավորված երաշխիք, որ.

ա) ՀՏԶՀ-ն կատարելու է դրամաշնորհներին հարակից պայմանները, և
բ) դրամաշնորհներն ստացվելու են:

Հիմնական միջոցների ձեռքբերմանը վերաբերող դրամաշնորհները հետաձգվում են և ճանաչվում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:
Ծախսերին վերաբերող դրամաշնորհները հետաձգվում են և ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցում են այն ծախսումները, որոնց համար ստացվել են:

2.8 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները՝ ըստ անհրաժեշտության: Ընթացիկ վերանորոգումները և պահպանման ծախսերը ծախսագրվում են նրանց կատարման պահին: Հիմնական միջոցների բաղկացուցիչների փոխարինման ծախսերը կապիտալացվում են, իսկ փոխարինված բաղկացուցիչները ապաճանաչվում են:
Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ կիրառելով մաշվածության հետևյալ տարեկան տոկոսաչափերը՝

Մեքենասարքավորումներ	20%
Տրանսպորտային միջոցներ	20%
Գրասենյակային գույք	20%

2.9. Դրամական միջոցներ

Դրամական միջոցները բաղկացած են բանկային հաշիվների մնացորդներից:

2.10. Կանխավճարներ

Կանխավճարները հաշվառվում են՝ արժեքից հանելով արժեզրկումից կորուստները: Եթե կա հայտանիշ, որ կանխավճարի հետ կապված ակտիվը, ապրանքը կամ ծառայությունը չեն ստացվելու, կանխավճարի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում, իսկ դրա համապատասխան արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցներն իրենցից ներկայացնում են ակտիվներ, որոնք ձեռք են իրականացվող բերվել ծրագրերի շրջանակներում ՀՏԶՀ-ում օգտագործման համար:

ԱՄՆ դոլար

Ծրագրեր	ՀՄՆՀ III	ՄՆՏԶ	USAID շնորհ	SDC շնորհ-1	SDC շնորհ	ՍԱԲԾ	ՏՏԵԶ	Ընդա-մենը
Սկզբնական արժեք								
Առ 1 հունվարի 2018թ.	**332,202**	**122,395**	**28,231**	**17,909**	**-**	**44,117**	**711**	**545,565**
Ձեռքբերումներ	-	2,400	848	-	5,488	287	-	9,023
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	**332,202**	**124,795**	**29,079**	**17,909**	**5,488**	**44,404**	**711**	**554,588**
Ձեռքբերումներ	-	-	2,472	-	-	-	52	2,524
Դուրսգրումներ (բ)	-	-	-	-	-	(32,443)	-	(32,443)
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	**332,202**	**124,795**	**31,551**	**17,909**	**5,488**	**11,961**	**763**	**524,669**
Կուտակված մաշվածություն								
Առ 1 հունվարի 2018թ.	**332,202**	**32,788**	**8,871**	**10,410**	**-**	**12,504**	**88**	**396,863**
Տարեկան մաշվածության ծախս	-	16,568	4,183	3,544	-	6,369	89	30,753
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	**332,202**	**49,356**	**13,054**	**13,954**	**-**	**18,873**	**177**	**427,616**
Տարեկան մաշվածության ծախս	-	16,665	4,513	3,955	5,488	2,398	95	33,114
Դուրսգրումներ	-	-	-	-	-	(11,822)	-	(11,822)
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	**332,202**	**66,021**	**17,567**	**17,909**	**5,488**	**9,449**	**272**	**448,908**
Հաշվեկշռային արժեք								
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	**-**	**75,439**	**16,025**	**3,955**	**5,488**	**25,531**	**534**	**126,972**
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	**-**	**58,774**	**13,984**	**-**	**-**	**2,512**	**491**	**75,761**

(ա) 31.12.2019թ. դրությամբ 346,275 ԱՄՆ դոլար (31.12.2018թ.՝ 332,202 ԱՄՆ դոլար) սկզբնական արժեքով հիմնական միջոցներն ամբողջությամբ մաշված են:

(բ) ՀՀ Կառավարության 12.12.2019թ. N 1801-Ա որոշման համաձայն, մեկ ավտոմեքենա փոխանցվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին:

4. Ստացվելիք ֆոնդեր

Իրենցից ներկայացնում են ՀՏԶՀ ծրագրերի իրականացման համար ստացվելիք ֆոնդերը.

Ծրագիր	Ծնթ.	31.12.2019 ԱՄՆ դոլար	31.12.2018 ԱՄՆ դոլար
ՏՏԵԶ	4.1	61,717,073	66,122,085
ՄՆՏԶ	4.2	12,237,466	17,485,226
ՍԱԲԾ	4.3	72,780,302	74,292,770
USAID շնորհ	4.4	4,175,331	5,066,161
Դպրոցական կահույք ՍԱԲԾ ծրագրի համար	4.5	-	-
ՀՀ մարզերում ջրամատակարարման ծրագիր	4.6	-	-
Գազաֆիկացման ծրագիր	4.7	-	-
Հրատապ ծրագրեր	4.8	-	713,214
		150,910,172	**163,679,456**

4.1 ՏՏԵՋ

	IBRD 8572-AM	ՀՀ Կառավարության համաֆին.	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Ստացելիք առ 31.12.2018թ.	**52,815,217**	**13,306,868**	**66,122,085**
Շնորհված	-	-	-
Ստացված	(3,676,254)	(728,758)	(4,405,012)
Ստացվելիք առ 31.12.2019թ.	**49,138,963**	**12,578,110**	**61,717,073**

4.2 ՄՆՏՋ

	IBRD 8483-AM	ՀՀ Կառավարության համաֆինան սավորում	Համայնքի ներդրում	Դոնոր	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Առ 31.12.2018	**12,379,243**	**4,728,833**	**376,434**	**716**	**17,485,226**
Շնորհված	-	-	-	-	-
Ստացված	(3,650,424)	(1,353,445)	(243,891)	-	(5,247,760)
Առ 31.12.2019	**8,728,819**	**3,375,388**	**132,543**	**716**	**12,237,466**

4.3 ՍԱԲԾ

	ADB Loan 3284-ARM	ՀՀ Կառավարության համաֆին.	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Առ 31.12.2018թ.	**57,337,056**	**16,955,714**	**74,292,770**
Շնորհված	-	-	-
Վերագնահատում	(328,161)	-	(328,161)
Ստացված	-	(1,184,307)	(1,184,307)
Առ 31.12.2019թ,	**57,008,895**	**15,771,407**	**72,780,302**

4.4 USAID շնորհ

	USAID շնորհ	Համայքի ներդրում	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Առ 31.12.2018թ.	**4,394,411**	**671,750**	**5,066,161**
Շնորհված	-	-	-
Ստացված	(890,411)	(419)	(890,830)
Առ 31.12.2019թ.	**3,504,000**	**671,331**	**4,175,331**

4.5 Դպրոցական կահույք ՍԱԲԾ ծրագրի համար

	Պետական շնորհ	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Առ 31.12.2018թ.	-	-
Շնորհված	122,880	122,880
Ստացված	(122,880)	(122,880)
Առ 31.12.2019թ.	-	-

4.6 ՀՀ մարզերում ջրամատակարարման ծրագիր

	Պետական շնորհ	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Առ 31.12.2018թ.	-	-
Շնորհված	622,509	622,509
Ստացված	(622,509)	(622,509)
Առ 31.12.2019թ.	-	-

4.7 Գազաֆիկացման ծրագիր

	Պետական շնորհ	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Առ 31.12.2018թ.	-	-
Շնորհված	604,512	604,512
Ստացված	(604,512)	(604,512)
Առ 31.12.2019թ.	-	-

4.8 Հրատապ ծրագրեր

	Պետական շնորհ	Համայքի ներդրում	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Առ 31.12.2018թ.	-	**713,214**	**713,214**
Շնորհված	-	-	-
Ստացված	-	(713,214)	(713,214)
Առ 31.12.2019թ.	-	-	-

5. Կանխավճարներ

Ծրագիր	31.12.2019 ԱՄՆ դոլար	31.12.2018 ԱՄՆ դոլար
ՍԱԲԾ	2,024,008	1,582,782
ՏՏԵԶ	72,077	966,246
Ջերմուկ-1	168,454	191,975
ՄՆՏԶ (ա)	34,931	167,621
Ջերմուկ-2	17,723	82,592
Հրատապ ծրագրեր	58,854	33,025
Այլ	5,359	-
	2,381,406	**3,024,241**

ա/ Մինչև 20% կանխավճար տրամադրվում է շինարարական աշխատանքների իրականացնող կազմակերպություններին՝ համապատասխան բանկային երաշխիքների ստացման դեպքում:

6. Դրամական միջոցներ

	Բանկ	Արժույթ	31.12.2019 ԱՄՆ դոլար	31.12.2018 ԱՄՆ դոլար
Ընթացիկ այլ հաշիվներ				
Ընթացիկ հաշիվ	Արարատբանկ	AMD	175,825	189,076
Համայնքների ներդրման հաշիվ	Արարատբանկ	AMD	12,279	12,171
Դոնորների հաշիվ	Արարատբանկ	AMD	853	847
			188,957	**202,094**
SDC շնորհ				
SDC շնորհ	Արարատբանկ	USD	19	64,355
Համայնքների ներդրման հաշիվ	Արարատբանկ	AMD	24,164	24,622
			24,183	**88,977**
ՄՆՏԶ				
Նպատակային հաշիվ (IBRD 8283-AM)	Գանձապետարան	USD	871,912	784,845
Համայնքների ներդրման հաշիվ	Արարատբանկ	AMD	194,780	333,642
Համաքների ներդրման հաշիվ	Գանձապետարան	AMD	113,377	-
Դոնորների հաշիվ	Գանձապետարան	AMD	19	18
			1,180,088	**1,118,505**
ՍԱԲԾ				
Դեպոզիտային հաշիվ (ADB 3284-ARM)	Գանձապետարան	USD	12,198,218	18,055,516
Կառավարության ներդրման հաշիվ	Գանձապետարան	AMD	30,241	-
			12,228,459	**18,055,516**
USAID շնորհ				
Դրամաշնորհի հաշիվ	Գանձապետարան	USD	77	13,530
Համայնքների ներդրման հաշիվ	Արարատբանկ	AMD	109,180	107,859
			109,257	**121,389**
ՏՏԵԶ				
Դրամաշնորհի հաշիվ	Գանձապետարան	USD	1,163,926	414,394
			1,163,926	**414,394**
Ջերմուկ-1				
Դրամաշնորհի հաշիվ	Արարատբանկ	AMD	9,674	93,304
			9,674	**93,304**

	Բանկ	Արժույթ	31.12.2019 ԱՄՆ դոլար	31.12.2018 ԱՄՆ դոլար
Ջերմուկ-2				
Դրամաշնորհի հաշիվ	Գանձապետարան	AMD	769,888	1,345,155
Դրամաշնորհի հաշիվ	Գանձապետարան	AMD	49,410	-
Դրամաշնորհի հաշիվ	Գանձապետարան	AMD	59,635	-
			878,933	**1,345,155**
Հրատապ ծրագրեր				
Դրամաշնորհի հաշիվ	Գանձապետարան	AMD	3,002,064	7,480,641
Համայնքների ներդրման հաշիվ	Գանձապետարան	AMD	87,083	129,186
			3,089,147	**7,609,827**
Դպրոցական կահույք ՍԱԲԾ ծրագրի համար				
Դրամաշնորհի հաշիվ	Գանձապետարան	AMD	101,020	-
			101,020	-
ՀՀ մարզերում ջրամատակարարման ծրագիր				
Դրամաշնորհի հաշիվ	Գանձապետարան	AMD	618,504	-
			618,504	-
Գազաֆիկացման ծրագիր				
Դրամաշնորհի հաշիվ	Գանձապետարան	AMD	603,025	-
			603,025	-
			20,195,173	**29,049,161**

7. Հիմնադիրների ներդրումներ

ՀՏԶՀ-ի միակ հիմնադիրը ՀՀ Կառավարությունն է: Հիմնադիրը ներդրել է հիմնական միջոցներ՝ 151,631 ԱՄՆ դոլար գնահատված արժեքով: Նշված հիմնական միջոցները 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված են:

8. Դրամաշնորհներ կառավարությունից

Հիմնականում ներկայացնում է ՀՏԶՀ-ի կողմից ծրագրերի իրականացման համար ստացված դրամաշնորհները՝

	31.12.2019թ. ավարտվող տարի													Ընդամենը
	SDC շնորհ	SDC շնորհ-1	ՄՆՏԶ	ՍԱԲԾ	ՏՏԵԶ	USAID շնորհ	Ջերմուկ-1 շնորհ	Ջերմուկ-2 շնորհ	Դպրոցական կահույք ՍԱԲԾ ծրագրի համար	ՀՀ մարզերում ջրամատակարման ծրագիր	Գազաֆիկացման ծրագիր	Հրատապ ծրագրեր	Այլ USD	
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Սկզբնական մնացորդ	**90,841**	**1,026**	**18,711,164**	**93,615,526**	**67,457,327**	**5,199,947**	**269,945**	**1,426,369**	**-**	**-**	**-**	**8,318,427**	**77,926**	**195,168,498**
Ստացված դրամաշնորհներ	-	-	-	-	-	-	-	-	122,880	622,509	604,512	-	-	**1,349,901**
Այլ աճ/(նվազում)	-	2,929	-	-	-	-	-	-	(20,960)	-	-	47,701	-	**29,670**
Վերագնահատում	-	-	-	(328,161)	-	-	-	-	-	-	-	-	-	**(328,161)**
Փոխհատուցվող ծախսերի համապատասխան եկամուտ	(65,986)	(3,955)	(5,275,611)	(6,911,224)	(4,671,053)	(907,935)	(83,690)	(571,266)	-	-	-	(5,526,662)	(72,628)	**(24,090,010)**
Վերջնական մնացորդ	**24,855**	**-**	**13,435,553**	**86,376,141**	**62,786,274**	**4,292,012**	**186,255**	**855,103**	**101,920**	**622,509**	**604,512**	**2,839,466**	**5,298**	**172,129,898**

	31.12.2018թ. ավարտվող տարի										Ընդամենը
	SDC շնորհ	SDC շնորհ-1	ՄՆՏՋ	ՍԱԲԾ	ՏՏԵՋ	USAID շնորհ	Ջերմուկ-1 շնորհ	Ջերմուկ-2 շնորհ	Հրատապ ծրագրեր	Այլ	
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Սկզբնական մնացորդ	**2,410,734**	**4,570**	**26,189,826**	**100,355,703**	**68,525,253**	**6,758,963**	**1,726,591**	**-**	**-**	**13,672**	**205,985,312**
Ստացված դրամաշնորհներ	-	-	-	-	-	-	-	1,441,621	8,369,318	105,103	**9,916,042**
Այլ աճ/ (նվազում)	(10,832)	-	-	1	1	-	(115,829)			-	**(126,659)**
Վերագնահատում	-	-	-	(1,374,483)	-	-	-			-	**(1,374,483)**
Փոխհատուցվող ծախսերի համապատասխան եկամուտ	(2,309,061)	(3,544)	(7,478,662)	(5,365,695)	(1,067,927)	(1,559,016)	(1,340,817)	(15,252)	(50,891)	(40,849)	**(19,231,714)**
Վերջնական մնացորդ	**90,841**	**1,026**	**18,711,164**	**93,615,526**	**67,457,327**	**5,199,947**	**269,945**	**1,426,369**	**8,318,427**	**77,926**	**195,168,498**

9. Կրեդիտորական պարտքեր

	31.12.2019 ԱՄՆ դոլար	31.12.2018 ԱՄՆ դոլար
ՄՆՏԶ		
Աշխատանքների գծով (ա)	*69,596*	*138,839*
Այլ	*-*	*89*
	69,596	***138,928***
ՍԱԲԾ		
Աշխատանքների գծով (ա)	*653,729*	*338,293*
Այլ	*1,139*	*15*
	654,868	***338,308***
USAID		
Աշխատանքների գծով (ա)	*9*	*1,155*
Այլ	*3,122*	
	3,131	***1,155***
ՏՏԵԶ		
Աշխատանքների գծով (ա)	164,810	46,472
	164,810	***46,472***
SDC Դրամաշնորհ		
Աշխատանքների գծով (ա)	*-*	*4,559*
	-	***4,559***
Ջերմուկ-1		
Աշխատանքների գծով (ա)	*526*	*29,123*
	2,654	
	3,180	***29,123***
Ջերմուկ-2		
Աշխատանքների գծով (ա)	*27,865*	*763*
	27,865	***763***
Հրատապ ծրագրեր		
Աշխատանքների գծով (ա)	*185,375*	*2,317*
Այլ	*38*	*-*
	185,413	***2,317***
Այլ		
Աշխատանքների գծով (ա)	*2,106*	*14,904*
Հաշվեգրված տոկոսների գծով	*35,441*	*112,874*
ՀՄՆՀ III -ի գծով պարտքեր	*127,778*	*-*
Շահութահարկ	*-*	*26,298*
	165,325	***154,076***
	1,274,188	**715,701**

ա) Պահումները կատարվում են ծառայությունների դիմաց դուրս գրված հաշիվների 5% չափով՝ ՀՄՆՀ III ծրագրի շրջանակում, և 2.5%-ի՝ մնացած ծրագրերի շրջանակում, մինչև մեկ տարի ժամկետով՝ որպես աշխատանքի որակի երաշխիք:

10. Ծրագրային ծախսեր

	31.12.2019թ. ավարտվող տարի													
	SDC շնորհ	SDC շնորհ-1	ՄՆՏԶ	ՍԱԲԾ	USAID շնորհ	ՏՏԵԶ	Ջերմուկ-1	Ջերմուկ-2	Դպրոցա-կան կահույք ՍԱԲԾ ծրագրի համար	ՀՀ մարզերում ջրամատա-կարման ծրագիր	Գազաֆի-կացման ծրագիր	Հրատապ ծրագրեր	Այլ	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Աշխատանքներ	-	-	1,227,605	6,317,503	0	4,491,281	79,656	568,470	-	-	-	5,377,040	42,126	**18,103,681**
Ապրանքներ	52,431	-	3,389,298	16,760	852,505	-	-	-	-	-	-	80,690	-	**4,391,684**
Խորհրդատվական ծառայություններ	2,930	-	50,057	426,862	44,058	107,346	4,034	**2,796**	-	-	-	68,932	3,435	**710,450**
Գործառնական ծախսեր	5,138	-	591,986	147,701	6,859	72,331	-	-	-	-	-	-	27,067	**851,082**
Հիմնական միջոցների մաշվածություն	5,487	3,955	16,665	2,398	4,513	95	-	-	-	-	-	-	-	**33,113**
Նախնական վճար	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	**65,986**	**3,955**	**5,275,611**	**6,911,224**	**907,935**	**4,671,053**	**83,690**	**571,266**	-	-	-	**5,526,662**	**72,628**	**24,090,010**

	31.12.2018թ. ավարտվող տարի										
	SDC շնորհ	SDC շնորհ-1	ՄՆՏԶ	ՍԱԲԾ	USAID շնորհ	ՏՏԵԶ	Ջերմուկ-1	Ջերմուկ-2	Հրատապ ծրագրեր	Այլ	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Աշխատանքներ	416,808	-	6,159,044	4,983,648	58,062	929,493	1,323,738	15,252	50,891	-	**13,936,936**
Ապրանքներ	1,800,038	-	498,342	-	1,448,827	-	-	-	-	-	**3,747,207**
Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում	23,785	-	237,677	212,699	46,178	88,856	17,079	-	-	27,436	**653,710**
Գործառնական ծախսեր	68,430	-	567,031	162,979	1,766	49,489	-	-	-	13,412	**863,107**
Հիմնական միջոցների մաշվածություն	-	3,544	16,568	6,369	4,183	89	-	-	-	-	**30,753**
Նախնական վճար	-	-	-	-	-	-	-	-	-	-	**-**
Ընդամենը	**2,309,061**	**3,544**	**7,478,662**	**5,365,695**	**1,559,016**	**1,067,927**	**1,340,817**	**15,252**	**50,891**	**40,848**	**19,231,713**

11. Դրամական հոսքեր

	31.12.2019թ. ավարտվող տարի												
	SDC շնորհ	ՄՆՏԶ	ՍԱԲԾ	USAID շնորհ	ՏՏԵԶ	Ջեր-մուկ-1	Ջեր-մուկ-2	Դպրոցական կահույք ՍԱԲԾ ծրագրի համար	ՀՀ մարզերում ջրամատա-կարման ծրագիր	Գազաֆի-կացման ծրագիր	Հրատապ ծրագրեր	ՀՏԶՀ այլ	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Ստացված ֆոնդեր	**-**	**5,247,760**	**1,184,307**	**890,830**	**4,405,012**	**-**	**-**	**122,509**	**611,598**	**603,025**	**760,965**	**37,004**	**13,863,010**
Վարկ/շնորհ	-	3,650,424	-	890,411	3,676,254	-	-	122,509	611,598	603,025	-	-	9,554,221
ՀՀ Կառավարություն	-	1,353,445	1,184,307	419	728,758	-	-	-	-	-	-	-	3,266,929
Համայնքի ներդրում	-	243,891	-	-	-	-	-	-	-	-	760,965	-	1,004,856
Այլ հովանավորներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	37,004	37,004
Ծրագրային ծախսեր	**(64,917)**	**(5,157,410)**	**(7,016,732)**	**(903,918)**	**(3,658,453)**	**(83,183)**	**(479,295)**	-	-	-	**(5,366,630)**	**(51,352)**	**(22,781,890)**
Աշխատանքներ	(4,480)	(1,126,068)	(6,442,175)	(1,154)	(3,478,761)	(79,149)	(476,499)	-	-	-	(5,216,958)	-	(16,825,244)
Ապրանքներ	(52,381)	(3,389,299)	-	(851,847)	-			-	-	-	(80,740)	-	(4,374,267)
Խորհրդատվություն և ուսուցում	79	(44,848)	(426,855)	(44,058)	(107,360)	(4,034)	(2,796)	-	-	-	(68,932)	(3,435)	(702,239)
Գործառնական ծախսեր	(8,135)	(597,195)	(147,702)	(6,859)	(72,332)	-	-	-	-	-	-	(47,917)	(880,140)
Նախնական վճար	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Այլ գործառնական հոսքեր (զուտ)	-	(38,176)	-	-	-	-	-	(20,960)	-	**-**	-		**(59,136)**
Արտարժույթի օգուտ/(կորուստ)	123	9,409	5,368	956	2,972	(447)	825,185	(529)	6,905	**-**	(727,126)	1,212	**124,028**
Դրամական զուտ հոսք	**(64,794)**	**61,583**	**(5,827,057)**	**(12,132)**	**749,531**	**(83,630)**	**345,890**	**101,020**	**618,503**	**603,025**	**(5,332,791)**	**(13,136)**	**(8,853,988)**
Սկզբնական մնացորդ	**88,977**	**1,118,505**	**18,055,516**	**121,389**	**414,394**	**93,304**	**533,043**	-	-	-	**8,421,939**	**202,094**	**29,049,161**
Վերջնական մնացորդ	**24,183**	**1,180,088**	**12,228,459**	**109,257**	**1,163,925**	**9,674**	**878,933**	**101,020**	**618,503**	**603,025**	**3,089,148**	**188,958**	**20,195,173**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	31.12.2018թ. ավարտվող տարի									
	SDC շնորհ	ՄՆՏԶ	ՍԱԲԾ	USAID շնորհ	ՏՏԵԶ	Ջերմուկ-1	Ջերմուկ-2	Հրատապ ծրագրեր	ՀՏԶՀ այլ	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Ստացված/ (վերադարձված) ֆոնդեր	**2,153,638**	**6,770,401**	**689,969**	**1,624,103**	**2,311,786**	**(115,829)**	**1,441,622**	**7,656,104**	**127,482**	**22,659,276**
Վարկ/շնորհ	2,113,385	4,828,642	-	1,576,589	1,913,887	-	-	-	-	10,432,503
ՀՀ Կառավարություն	-	1,826,627	689,969	47,514	397,899	(115,829)	1,441,622	7,526,892	-	11,814,694
Համայնքների ներդրումներ	40,253	115,132	-	-	-	-	-	129,212	-	284,597
Այլ հովանավորներ	-	-	-	-	-	-	-	-	127,482	127,482
Ծրագրային ծախսեր	**(2,310,280)**	**(7,175,121)**	**(4,139,254)**	**(1,565,636)**	**(1,987,610)**	**(1,229,909)**	**(97,081)**	**(81,599)**	**(40,848)**	**(18,627,338)**
Աշխատանքներ	(412,528)	(5,869,666)	(3,763,286)	(68,018)	(1,849,265)	(1,212,830)	(97,081)	(81,599)	-	(13,354,273)
Ապրանքներ	(1,800,041)	(500,742)	(287)	(1,448,827)	-	-	-	-	-	(3,749,897)
Խորհրդատվական ծառայություններ և ուսուցում	(11,200)	(237,682)	(212,702)	(3,964)	(88,856)	(17,079)	-	-	(27,436)	(598,919)
Գործառնական ծախսեր	(86,511)	(567,031)	(162,979)	(44,827)	(49,489)	-	-	-	(13,412)	(924,249)
Նախնական վճար	-	-	-	-	-	-	-	-	-	-
Այլ գործառնական հոսքեր (զուտ)	-	-	-	-	-	2,622	-	-	(2,622)	-
Արտարժույթի օգուտ/(կորուստ)	(443)	(901)	(82)	(405)	(377)	(1,077)	614	35,322	104	**32,755**
Դրամական զուտ հոսք	**(157,085)**	**(405,621)**	**(3,449,367)**	**58,062**	**323,799**	**(1,344,193)**	**1,345,155**	**7,609,827**	**84,116**	**4,064,693**
Սկզբնական դրամական մնացորդ	**246,062**	**1,524,126**	**21,504,883**	**63,327**	**90,595**	**1,437,497**	**-**	**-**	**117,978**	**24,984,468**
Վերջնական դրամական մնացորդ	**88,977**	**1,118,505**	**18,055,516**	**121,389**	**414,394**	**93,304**	**1,345,155**	**7,609,827**	**202,094**	**29,049,161**

12. Հարկեր

Կիրառելի հարկերը հաշվարկվում և վճարվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենքների համաձայն:
Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը 2019թ.-ի համար սահմանված է 20% է (2018թ.՝ 20%): 2020թ.-ից շահութահարկի դրույքաչափը սահմանվել է 18%:

13. Դատական հայցեր

Այս ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ ՀՏԶՀ-ի դեմ առկա են երկու դատական հայցեր՝ Ջերմուկ քաղաքի վերանորոգման ծրագրի շրջանակներում

- Պայմանագրային պարտավորությունները կատարելու պահանջի մասին
- Կապալառու կազմակերպության հետ պայմանագիրը լուծելու և պատաճառած վնասը հատուցելու մասին:

14. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր

Կորոնավիրուսի համավարակ

2020 թվականի մարտին ԱՀԿ-ն COVID-19-ի բռնկումը որակեց որպես պանդեմիա ՝ հիմնվելով դրա համաշխարհային ազդեցության արագ աճի վրա: Հաշվի առնելով կորոնավիրուսի լայն տարածումը, ՀՀ Կառավարությունը 2020թ.-ի մարտ 16-ից մինչև հուլիսի 13-ը ՀՀ ողջ տարածքում սահմանել է արտակարգ դրություն:
Նշված հանգամանքը բացասական ազդեցություն է գործում Հիմնադրամի վրա, մասնավորապես.

- Ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ մատակարման խաթարումներ,
- Գրասենյակային և ծրագրերի իրականացման տարածքներին հասանելիության դժվարություններ,
- Հանդիպումների կազմակերպման սահմանափակումներ:

COVID-19-ի բռնկման ամբողջ ազդեցությունը շարունակում է զարգանալ սույն հաշվետվության ամսաթվի դրությամբ: Որպես այդպիսին, անորոշ է, թե ինչ մասշտաբի ազդեցություն կունենա պանդեմիան Հիմնադրամի վրա:

15. ՖՀՄՍ 13 Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք հազար դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Կրեդիտորական պարտքեր	1,274,188	*Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) առևտրային կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 3	Կիրառելի չէ

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 06.07.2020 13:13